ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «Էջմիածնի արհեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ դասախոսի, արտադրական ուսուցման վարպետի թափուր տեղի համար հետևյալ մասնագիտությունների գծով.

1.«Ոսկերչություն»- 1 դրույք

2.«Այգեգործություն» - 1 դրույք

3,«Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» - 1 դրույք ,

4.«Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում» - 1 դրույք,

5.«Մետաղների մեխանիկական մշակում հաստոցների և գծերի վրա» - 1 դրույք

6. «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» - 1 դրույք,

7.«Գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովում» - 1 դրույք,

1.«Հայոց լեզվի և գրականություն»,

2.«Ֆիզկուլտուրա»,

3.«Քիմիա»,

4.«Կենսաբանություն» առարկաների ուսուցչի

1.SS ակտիվների ռեեստրի վարողի թափուր տեղի համար - 1 դրույք :

Թափուր աշխատատեղին ներկայացվող պահանջներն են՝

- Հանրակրթական առարկաների դասավանդման դեպքում՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին
- Դիմորդը պետք է տվյալ բնագավառում ունենա միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում և (կամ) տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ
- Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար բարձրագույն մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի:

Մրցույթն անցկացվում է բանավոր հարցազրույցի միջոցով՝ յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին:

Հարցաշարը կազմում է հաստատությունը:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1) ,
- մեկ լուսանկար 3 x 4 չափի,
- կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ՝ բնօրինակը և պատճեն),
- անձը հաստատող փաստաթուղթ (բնօրինակը և պատճեն),
- ինքնակենսագրություն (Ձև 4)
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները ՝ զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճեն), ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր ՝ առկայության դեպքում,

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում ՝ հավաստող փաստաթուղթ
- աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում) :

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում :Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ , կամ առկա են թերություններ , մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2026 թ.-ի օգոստոսի 3-ից մինչև 2026 թ,-ի օգոստոսի 14-ը ներառյալ , ամեն օր ժամը 9:00-ից 15:00, բացի շաբաթ , կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա հանրակրթական առարկաների համար 2026 թ,օգոստոսի 19-ին ՝ ժամը 10:00-ին, մասնագիտական մոդուլների և արտադրական ուսուցման վարպետների մրցույթի համար 2026 թ. օգոստոսի 19-ին՝ ժամը 13:00-ին «Էջմիածնի արհեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ ք,Էջմիածին , Մ,Մելքոնյան 53, հեռ,(0231)5-59-65, 093-19-85-14: